ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 104-Լ

«06» 12 2023 թ.

ք. Երևան

ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության պետ Հայկ Ռաֆիկի Մարտիրոսյանին զբաղեցրած պաշտոնից ազատելու և նրա պարտականությունների կատարումը նույն վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պետ Ռուբեն Հարությունի Առաքելյանի վրա դնելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 20.11.2023թ. համապատասխանաբար՝ 11/260-Ա և 11/261-Ա հրամանները և այն, որ անհրաժեշտ է նրանց միջև կատարել փաստաթղթերի և գույքի հանձնում-ընդունում, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Կատարել Հ.Մարտիրոսյանի կողմից՝ ՀՀ դատախազության ֆինանսատնտեսական վարչության փաստաթղթերի և գույքի հանձնում, իսկ Ռ.Առաքելյանի կողմից՝ ընդունում, որի համար ստեղծել հանձնախումբ՝ հետևյալ կազմով.

Հանձնախմբի ղեկավար՝

Ափրիկյան Միեր - Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղար

Հանձնախմբի անդամներ՝

Հովհաննիսյան Վահե - Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարի տեղակալ

Գրիգորյան Սուսաննա - Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական

	վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ-գլխավոր հաշվապահ
Նազարեթյան Արմինե -	Հայաստանի Հանրապետության դատախազության արխիվի բաժնի պետ
Ղահրամանյան Մարուշ -	Հայաստանի Հանրապետության դատախազության ընդհանուր բաժնի պետի պաշտոնակատար
Մանուկյան Լիաննա -	Հայաստանի Հանրապետության դատախազության առաջին բաժնի պետ
Գաբրիելյան Արմինե -	Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության գլխավոր մասնագետ:

2. Հանձնախմբի ղեկավարին՝ հանձնման-ընդունման ակտի մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն ներկայացնել մինչև 2023 թվականի դեկտեմբերի 20-ը:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ
ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ

Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ